ԼԻԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ Լ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ «ԲԱՐԵՎ, ՓՈՔՐԻԿ» ԳՐՔՈՒՄ

Զուգահեռներ տանելով հայ և օտարազգի գրական շարժման ընթացքներին՝ կարելի է ասել, որ հայ գրականությունը, շարունակելով պահպանել անցյալ դարերի կերտած մնայուն արժեքները, այժմ նույնպես շարունակում է իր ընթացքը՝ շնորհիվ մեր արդի բազմաշնորհ ստեղծագործողների, որոնք փորձում են գրականությանը նոր շունչ հաղորդել և մեր ժամանակներում կատարվող իրադարձությունները գեղարվեստորեն իրազեկել ընթերցասեր հասարակությանը: Մերօրյա գրական շարժման մեջ մեծ է կին արձակագիրների ներդրումը գրականության զարգացման գործում: Մանրամասն ուսումնասիրելով վերջին երկու տասնամյակների հայ կին արձակագիրների ստեղծագործությունները՝ կարող ենք եզրակացնել, որ նրանցում գրեթե միշտ առկա է հայ հոգսաշատ կնոջ կերպարը՝ ժամանակակից մտածողությամբ ու կենցաղով: Ժամանակակից արձակագիր Ալիս Հովհաննիսյանը նկատում է, որ մեր հասարակության մեջ այժմ փոքր-ինչ մեծացել է հայ կնոջ դերը՝ թույլ տալով շրջապատում արտահայտել նաև իր ուրույն կարծիքը, մասնակից դառնալ քաղաքական կյանքին. հենց այդ երևույթն էլ արտահայտություն է գտնում արդի հայ գրականության էջերում. «Գրական երկերը 2000թ-ից անմիջապես առաջ և հետո կին ստեղծագործողների կողմից նվաճվում և բնակեցվում են միանգամայն անսպասելի կերպարներով՝ նրանց խորունկ, անվերապահ բացահայտումներով ու ինքնաբացահայտումներով (մոնոլոգներ)»[1]:

Այսօրվա բազմաձիրք կին գրողների շարքում իր ուրույն տեղն ունի բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանը: Հեղինակ է «Արևելքը հայ արձակում» (1998թ.), «Պարույր Սևակի պոեմները» (2001թ.) մենագրությունների:[2] Շարունակելով իր գրական գործունեությունը՝ նա լույս ընծայեց «Բարև, փոքրիկ» ժողովածուն (2006 թ.), որտեղ զետեղված են հեղինակի արձակ գործերը, ճանապարհորդական նոթերն ու հրապարակախոսական հոդվածները:

Հեղինակի արձակ գործերը մեր ժամանակի և մեր ժամանակակից կյանքի արտացոլումներն են: Որպես գլխավոր կերպարներ հանդես են գալիս

---

[1] Արդի հայ կին գրողներ «Ելք դեպի ներս», Երևան 2006, էջ 3:
[2] «Ով, ով է հայեր» կենսագրական հանրագիտարան, Երևան 2005, հատոր N1, էջ 159:

կանայք՝ իրենց հոգեկան ապրումներով և առօրյա կենցաղով: Ժողովածուն բացող «Բարև, փոքրիկ» վիպակում գործող գլխավոր հերոսուհուն մտատանջում է երեխա ունենալու «բնական ցանկությունը». «Ուրեմն՝ երեխա ունենալ: Երեխա, որ անհամար ու անվերջանալի հոգսերով հանդերձ կիմաստավորի կյանքդ, քո մեջ եղած սերն ու կուտակված ջերմությունը կընդունի, քո քնքշանքի ու հոգածության «բեռը» տանելով կմեծանա, որ հետո գուցե քեզ հենարան լինի ու նաև իր կյանքի իմաստը փնտրի»[3]: Ահա և փոքրիկի ծնունդը դառնում է այն հրաշքը, որի համար պայքարել էր: Նա իր փոքրիկ հրաշքի հետ գտավ նաև իր՝ այդքան փնտրած երկրորդ կեսին: Հեղինակը հերոսուհու կերպարը ներկայացրել է գեղագիտորեն՝ նրա բոլոր հույզերով և ապրումներով հանդերձ:

Գեղարվեստական ուշագրավ արժեք է ներկայացնում հեղինակի «Իմ աշուն» վիպակը (2002թ.), որը հեղինակը սկսել է նախաբանով. «Մարդու ամենամեծ արժանիքը նրան կասեցնելու անհնարինությունն է» (Վիլյամ Սարոյան) (42): Գլխավոր հերոսուհիներ են՝ հեղինակը և իր դուստրը, որոնք ներկայացնում են երկու տարբեր սերունդ, երկու մոտեցում կյանքի հարցերին և, իհարկե, տարբեր մտածողություն: Մայրը, տարբեր փորձությունների միջով անցնելով, գիտի, որ այս կյանքում միայն սիրելը քիչ է, անհրաժեշտ է նաև անվերջ պայքարել բազում դժվարությունների դեմ՝ անհատի գոյությունը պահպանելու համար. չէ որ նա դստերը մեծացնելու ու ուսման տալու հոգսերը միայնակ է իր ուսերին կրել: Հերոսուհին անդուլ աշխատում է, իր մասնագիտության մեջ գիտակ է, միևնույն ժամանակ հարգված մարդ շրջապատում: Իսկ կանացի երջանկությունը, երկար որոնումներից հետո, նա գտավ հենց իր կողքին: Հեղինակը խոստովանում է. «Մի բան շատ պարզ է, որ իրար հետ լինելը հաճելի է» (73): Իսկ հերոսուհու աղջիկը, որպես դեռահաս օրիորդ, փորձում է այս բարդ իրադրության մեջ գտնել իր հետաքրքրությունները ու սերը: Հերոսուհին սկսում է հասկանալ, որ այս կյանքում ամեն մարդ երջանիկ լինելու իրավունք ունի. «... Ինչո՞ւ կյանքից շատ հաճախ մերը վերցնելիս գլուխ ենք կոտրում, թե ի՞նչ կլինի հետո...» (85): Նրանց հարաբերությունները գեղեցիկ են և համընթաց կյանքի կորագծին, իսկ աշնան անձրևոտ և սիրառատ եղանակը միայն էլ ավելի հասկացնել տվեց հոգիներում կատարվող փոթորկի մասին. «Ես զգում էի միայն, որ հանձնվում եմ: Հանձնվում ոմն մի տղամարդու, որը

[3] Լիլիթ Արզումանյան, «Բարև, փոքրիկ», Երևան, 2006, էջ 4 (այսուհետ՝ տեղում կնշվեն միայն էջերը):

իմը չէր, իմը չէր լինելու... բայց ես համառորեն չէի կարողանում և հավանաբար նաև չէի ուզում մտածել այդ մասին» (86):

Արձակագրուհու «Կարծում եմ՝ գիտես» և «Դրվագ» ստեղծագործություններում տեղի են ունենում իրարից տարբեր իրադարձություններ. մի դեպքում հեղինակն է հերոսուհին, ում հոգնեցրել է այս կյանքի տաղտուկ, միապաղաղ առօրյան («Կարծում եմ՝ գիտես»), մյուս երկում՝ կաթված ստացած մի տարեց կին ,ում հիվանդանալը «առիթ» է դառնում, որ իր զավակներն ու թոռները հավաքվեն և փորձեն շփել միմյաց հետ («Դրվագ»): Թոռներից մեկը խոստովանում է.

«-Իմիջայլոց, մենք տատիկին պետք է շնորհակալ լինենք, որ որոշեց հիվանդանալ:

-Ինչի՞

- Բա ոնց, իրար տեսնում ենք, խոսում ենք, ճանաչում ենք» (106):

Հեղինակի վերոհիշյալ երկու ստեղծագործություններից առաջինը գրված է օրագրային ձևով, իսկ երկրորդը՝ պատումի. երկու ստեղծագործություններին էլ բնորոշ են լեզվի արտահայտչաձևերի անմիջականությունը:

Լիլիթ Արզումանյանի՝ գեղարվեստական արժեք ունեցող երկերի շարունակությունն են կազմում նոթերը, որոնք ուխտագնացության և ուղևորության տպավորության տակ գրված երկեր են, և հրապարակախոսությունները, որոնք ժամանակակից կյանքի մասին հեղինակի խորհրդածություններն են:

«Անանց երազ, որ Արաքսից այն կողմ է» ուխտագնացությունն ունի երկրորդ վերնագիրը՝ «Ճանապարհորդություն Արևմտյան Հայաստան»: Հեղինակը, այցելելով մեր պապերի շեն ու ավեր երկիրը, 2005 թվականին փորձել է թղթին հանձնել իր տեսածը, մտածածը և այն զգացումները, որոնք հակասական են մեր ներկայիս Հայաստանի հետ: Հոգեկան ապրումներ է ունեցել՝ տեսնելով Անի, Վան, Մուշ և ուրիշ հնադարյա քաղաքներ, մեր անառիկ բերդերն ու սրբազան եկեղեցիները, որոնք , իհարկե, կիսով չափ ավերակ են: Եվ դրանք փորձում է համեմատել Արևելյան Հայաստանի տեսարժան վայրերի, եկեղեցիների ու սրբազան մատուռների հետ և գտնում է, որ այստեղ էլ ամեն հող բաժան-բաժան է եղել, բայց այս դեպքում՝ մերօրյա չինովնիկների կողմից: Հեղինակը ավելացնում է. «Մեզ մի բուռ հող է մնացել ու մի փոքր լիճ, հետն էլ վարի տված անտառներ, անխիղճ շահագործողների հոգեբանություն ու համառորեն դրսին հառած հայացք... Երկիրը ո՞նց կպահվի» (118-119): Նա իրավացիորեն խստապահանջ է, որովհետև մենք չգիտենք մեր՝ մեզ դարերով պահպանված ու հասած արժեքները պաշտպանել: Իսկ Արևմտյան Հայաստանը, ըստ հեղինակի, եթերային երկիր է՝ տխուր հիշողություններով և անանց կարո-

տով ողողված: Ինչպես պատմաբաններն ու գրողներն են վկայում, այնտեղ եղած հուշարձաններում ու մատուռներում է գտվում մեր արյան կանչը, որը անմար է յուրաքանչյուր ազգասեր հայի մեջ: Պարզապես պետք է արժանապատիվ ապրենք՝ պահպանելով մեր դարավոր ազգի հոգևոր «մնացորդները»: Հեղինակը գրում է. «Արևմտյան Հայաստանը մեր պապերի հիշողությունն է, որ դարձավ նաև մերը, որովհետև փոխանցվեց արյունով, զգայարաններով, երգերով ու պատմություններով» (120-121):

«Թող հնդիկները ինձ ներեն» հուշագրությունը, որը ևս ունի երկրորդ վերնագիրը՝ «Օրագիր Հնդկաստանից», դեպի Հնդկաստան կատարած ուղևորության մասին է: Այն գրված է օրագրայի ձևով: Հեղինակի այս գործը շատ սրամիտ ու դիպուկ ձևով ներկայացնում է հայի ու հնդիկի կենցաղային տարբերությունները, կյանքի ընկալումները: Հնդկաստան ուղևորությունը հեղինակի համար առաջին հերթին Թաջ Մահալի հրաշագեղ կոթողն է և հենց այն տեսնելու համար է մեկնել այդ հեռավոր երկիրը: «Հնդիկները թող ինձ ներեն» հուշագրությունը կարդացվում է մեկ շնչով և ունի ճանաչողական մեծ արժեք:

Լիլիթ Արզումանյանի ստեղծագործությունների մեջ արժանավայել տեղ են զբաղեցնում հրապակախոսությունները, որոնք, կարելի է ասել, մեր օրերի որոշ առումով անկենդան կյանքի արտացոլումներն են: «Ցավի ակամա զգացողություն» հրապակախոսությունում հեղինակը խոսում է մեր՝ հայերի անկիրթ ու կոպիտ մի ստվար զանգվածի մասին, ովքեր նույնիսկ ապրիլի 24-ին դեպի Ծիծեռնակաբերդ երթի ժամանակ արևածաղիկ են վաճառում, իսկ ոմանք էլ՝ ուտում: Նա նկատում է. «Ամենափրկիչը անհատական ազգային մտածողությունն է, բայց այն հավանաբար գործում է ճակատագրական պահերին միայն ու հազվադեպ (ինչպես, օրինակ 88-ին), և հավանաբար հիմնականում չի գործում՝ պարզապես գոյատևելու համար ամենօրյա պայքար դարձած անհեթեթ կյանքում» (133):

Մյուս հրապարակախոսություններում արձակագրուհին փորձում է բարձրաձայնել մեր ազգային առօրյա հարցերը: «Համարձակվում եմ հարցնել» հոդվածում (2002թ.) թերի է համարել այն գնահատականներն ու վերաբերմունքը, որոնք առկա են հայ կանանց նկատմամբ: Անհրաժեշտ է գիտակցելով գնահատել այն ամենը, ինչ ունենք: «Նորօրյա աղոթքը» բողոք է ուղղված հայ այրերին, որոնք ետսահրաբար ոչինչ չեն անում ազգին հուզող հարցերի լուծման համար. «Ձեր կողքին մարդիկ են ապրում, որ ձեզ նման դատարկ գնալու են այս աշխարհից, բայց այսօր շատ դժվար են ապրում: Նրանց օգնել է պետք» (144): Այս մտքի շարունակությունն է «Երևանս» հրապարակախո-

սությունը (2006թ.): Այո, հեղինակի հետ ազգասեր հայերը կբարձրաձայնեն, որ Երևանը վերածվել է մի շուկայի, որտեղ տերը մեկն է և անում է այն, ինչ սիրտն ուզում է. «Մի խոսքով՝ ազատ Հայաստան: Ի՞նչ ուզում ես արա. նայող չկա, ձեռքդ բռնող չկա, չէ ասող չկա...» (147): Իսկ ե՞րբ է այդ ամենը կանոնավորվելու. չ՞է որ մենք գտնվում ենք «եվրոպականին տանող» ճանապարհին:

Ժողովածուն ամփոփող «Բայց մինչև ե՞րբ այսպես» հրապարակախոսությունը (2005թ.) հեղինակը սկսել է Գարեգին Նժդեհի խոսքերով. «Ժողովուրդների պատմությունն այլ բան չէ քան իրենց գոյամարտի, իրենց հաղթությանց և պարտությունների պատմությունը...» (155): Հենց այդ տառապած ժողովուրդը երբեմն մոռանում է իր անցյալը, այն անցյալը, որտեղ անմեղ զոհերի արյան հիշողությամբ պիտի փորձի ստեղծել ներկան: Հեղինակին տխրեցնում է այն հանգամանքը, որ մեր երկրում ամեն ինչ անորոշ է և անցակալի. «մերը» ոչ մի կերպ «իմը» չի դառնում: Բայց պետք է հուսալ, որ կգա մի արևոտ օր և ամեն ինչ մի գուցե լավ կլինի. «Արժանապատիվ պահվածքը ամեն դեպքում արդեն հաղթանակ է կանխորոշում» (156),- իմաստուն ձևով եզրակացնում է հեղինակը:

Ամփոփելով Լ. Արզումանյանի երկերին վերաբերողը ակնարկը, կարող ենք ասել. հեղինակը շարունակում է իր ստեղծագործություններում ժամանակակից գրողների նման քննել մարդկային կյանքի գաղափարական, խնդիրներ: Լիլիթ Արզումանյանի երկերի հիմքում ընկած են ժամանակակից հասարակական կյանքի և մարդկային հարաբերությունների բարդ, երբեմն սովորական աչքի համար անտեսանելի երևույթները, որոնք հեղինակը փորձել է մեկնաբանել յուրովի և տվել է ճշգրիտ պատասխաններ: Նա «Բարև, փոքրիկ» գրքում պատկերել է մեր ժամանակը և մեր օրերի մարդու բարդ ներաշխարհը, գեղարվեստորեն մարմնավորման մի ձևով, որն անհատական է, խիստ ինքնատիպ և չի կրկնում ուրիշներին: Տեղին է այս գրքի առիթով հիշել թումանյանական հետևյալ խոսքը. «Գրականությունը հայելի չէ լոկ. և եթե հայելի էլ ասենք,ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին ու ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»[4]:

---

[4] Հ. Թումանյան, «Խոսք պատանիների երեկոյին», 1913: Տես, Հ. Թումանյան, Երկնրի ժողովածու, հ. 4, Երևան, 1969, էջ 178: